

Ազգանուն, անուն, դպրոց _____

Ընդունելության քննություն մաթեմատիկայից 6-7-րդ դասարան 22.06.22

Մինչև թեստը սկսելը խնդրում ենք ուշադիր կարդացեք այս հրահանգները

- Գրեք Ձեր անունը և դպրոցը այս էջի վերևում:
- Պատասխանեք այս թեստի բոլոր հարցերին, օգտագործելով միայն *կապույտ կամ սև գրիչ*. կարող եք այն վերցնել թեստը վերահսկողից:
- Յուրաքանչյուր խնդրի լուծում գրեք խնդրի ներքևում հատկացված տեղում, իսկ ընտրովի պատասխաններով խնդիրների ճիշտ պատասխանների համարները վերցրեք օղակի մեջ:
- Մի բացեք մետաղական ամրակները: Եթե հաշվարկների կամ նշումների համար լրացուցիչ տեղի կարիք ունեք, օգտագործեք էջի հակառակ կողմը:
- Յուրաքանչյուր ճիշտ լուծված առաջադրանքի համար դուք կստանաք հարցի համարի կողքին նշված միավորը:
- Խնդրում ենք գրեք կոկիկ և ընթեռնելի, գծագրերը գծելիս օգտագործեք քանոն և մատիտ:
- Չի թույլատրվում օգտագործել հաշվիչ:
- Առաջադրանքի տևողությունը 120 րոպե է:

Մաղթում ենք հաջողություն

1. (0,4 միավոր) Տուփում կա 5 կարմիր և 6 կանաչ մատիտ: Առանց նայելու ամենաքիչը քանի՞ մատիտ պետք է հանել տուփից, որ նրանց մեջ լինի նույն գույնի գունե երկու մատիտ:

1) 2	2) 3	3) 5	4) 7
------	------	------	------
2. (0,4 միավոր) Նույն արտադրողականությամբ աշխատող 6 տրակտոր 5 ժամում վարում է 6 հա: Քանի՞ հեկտար կվարեն 9 տրակտորը 10 ժամում:

1) 40	2) 9	3) 25	4) 18
-------	------	-------	-------
3. (0,4 միավոր) Պագեցնել $\frac{9900n^3}{18n^3}$ հարաբերությունը:

1) $\frac{11}{20}$	2) $\frac{11}{2}$	3) $\frac{11}{200}$	4) $\frac{110}{2}$
--------------------	-------------------	---------------------	--------------------
4. (0,4 միավոր) Ո՞ր թվերի համար «Եթե $|a| < |b|$, ապա $a > b$ » պնդումը ճիշտ կլինի:

1) դրական	2) ամբողջ	3) բացասական	4) բոլոր
-----------	-----------	--------------	----------
5. (0,4 միավոր) Գտնել $-(3 - (-4 + 2))$ արտահայտության արժեքը:

1) -1	2) -9	3) -5	4) 5
-------	-------	-------	------
6. (0,4 միավոր) Գտնել 30-ի և 45-ի ընդհանուր բաժանարարների քանակը:

1) 5	2) 6	3) 3	4) 4
------	------	------	------
7. (0,4 միավոր) Գտնել այն թիվը, որն իր 20%-ից մեծ է 60-ով:

1) 85	2) 80	3) 78	4) 75
-------	-------	-------	-------
8. (0,4 միավոր) Գտնել $6,3 \cdot (x + 2,4) - 9,1 \cdot (x + 1,4)$ արտահայտության արժեքը, եթե $x = -1,4$ -ի:

1) 7,3	2) 6	3) 6,3	4) $\frac{1}{15}$
--------	------	--------	-------------------

9. (0,4 միավոր) Դասարանի 30 աշակերտներից մաթեմատիկայի թեմատիկ աշխատանքից «7» ստացել են 4 հոգի, «6»՝ 8 հոգի, «5»՝ 6 հոգի, իսկ մնացածը ստացել են «4»: Թեմատիկ աշխատանքի արդյունքները շրջանային դիագրամի միջոցով ցույց տալիս «4» ստացողներին քանի՞ աստիճանի կենտրոնական անկյուն կհամապատասխանեցնես:

1) $\frac{2}{5}$

2) 72

3) 12

4) 144

10. (0,4 միավոր) Ի՞նչ թվանշանով պետք է փոխարինել աստղանիշը, որպեսզի $\overline{237 * 48}$ վեցանիշ թիվը բաժանվի 18-ի:

1) 3

2) 6

3) 2

4) 9

11. (2,0 միավոր) Ո՞ր թիվը կստացվի, եթե $\frac{2}{3}$ -ի տասնորդական կոտորակով գրառման մեջ ստորակետը մեկ թվանշան աջ տեղափոխվի:

12. (3 միավոր) Լուծել հավասարումը. $9 \cdot (x - 3) - 2,3 = 2\frac{1}{5} - 4,5 \cdot (2 - x)$

13. (3,5 միավոր) Հաշվել. $\frac{(8\frac{1}{4} - 3,51) : 2,37}{\frac{1}{5} \cdot 3,17 - 2,205 : 3\frac{1}{2}} =$

14. (2 սիավոր) 1-ից 100 բնական թվերից քանի՞սն են, որ ո՛չ 2-ի են բաժանվում, ո՛չ 3-ի:

15. (2,5 սիավոր) Գործարանի բոլոր աշխատակիցների 35%-ը կանայք են, իսկ մնացածը՝ տղամարդիկ, որոնք 504-ով ավելի են քան կանայք: Ընդամենը քանի՞ աշխատակից կա գործարանում:

16. (3 սիավոր) Հիմա ես երկու անգամ մեծ եմ, քան այն ժամանակ, երբ եղբայրս այժմյան տարիքիս էր: Իսկ երբ լինեմ այն տարիքին, որ այժմ եղբայրս է, երկուսիս տարիքները միասին կլինի 98: Քանի՞ տարեկան եմ հիմա: